ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 75

## ՆԵՐԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի, համայնքի ավագանին որոշում է՝

1.Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտները անվանել և վերանվանել համաձայն հավելվածի

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

Հավելված
համայնքի ավագանու
16.12.2021թ. թիվ [illegible] որոշման

# ՑՈՒՑԱԿ

## Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանման և վերանվանման մասին

| Հ/Հ | Գտնվելու վայրը | Ծածկագիր (բլոկ) | Թաղամաս |
|---|---|---|---|
| 1 | Ակունք համայնք, գ.Ակունք | 07-009-0108 | Մարզ Կոտայք համայնք Ակունք գ.Ակունք 108-րդ թաղամաս |
| 2 | Ակունք համայնք, գ.Կոտայք | 07-038-0131 | Մարզ Կոտայք համայնք Ակունք գ.Կոտայք 131-րդ թաղամաս |
| 3 | Ակունք համայնք, գ.Կոտայք | 07-038-0112 | Մարզ Կոտայք համայնք Ակունք գ.Կոտայք 112-րդ թաղամաս |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 74

## «ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՏՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՊԵՐԱՏԻՎԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4 -րդ կետի,հիմք ընդունելով «Ակունք համայնքի արոտօգտագործողների միավորում » սպառողական կոոպերատիվի ժողովի որոշումը և «Ակունք համայնքի արոտօգտագործողների միավորում » սպառողական կոոպերատիվի նախագահի դիմումը,համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել համայնքի ղեկավարին«Ակունք համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին տրամադրելու ֆինանսական աջակցություն՝ 11 000 000 դրամի չափով, գյուղատնտեսական տեխնիկա ձեռքբերելու նպատակով:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

ՀՀ էկոնոմիկայի նախարարության Գյուղատնտեսական

Ծրագրերի իրականացման վարչության ՀԳՌԿՄ 2

Ծրագրի ղեկավար՝ Դ. Մեջլումյանին

ՀՀ Կոտայքի մարզի «Ակունք համայնքի

ՀԱԿԱԶԿ»-ի նախագահ Հ.Ռուբենյանից

«Ակունք համայնքի արոտօգտագործողների

միավորում» ՍԿ- ի նախագահ Ա. Ավետիսյանից

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Մեջլումյան

Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի շրջանակներում «Ակունք համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման պլան»-ով նախատեսված «ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՏՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» սպառողական կոոպերատիվի գյուղատնտեսական տեխնիկաների ցանկում կատարվել է հետևյալ փոփոխությունը՝

ՀԱԿԱԶԿ-ի 2021 թվականի հոկտեմբերի 5-ին կայացած նիստին որոշեց «Ակունք համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման պլան»-ով նախատեսված գյուղտեխնիկաներից բացի «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ» ծրագրի շրջանակներում «ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՏՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» սպառողական կոոպերատիվի համար ձեռք բերել 1 հատ ՄՏԶ 150 կամ 180 ձ.ուժ հզորությամբ անիվավոր տրակտոր և 1 հատ քարհավաք մեքենա 5 տ բունկերով:

Խնդրում ենք Ձեր աջակցությունը «Ակունք համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման պլան»-ում փոփոխություն կատարելու և 1 հատ ՄՏԶ 150 կամ 180 ձ.ուժ հզորությամբ անիվավոր տրակտոր և 1 հատ քարհավաք մեքենա 5 տ բունկերով «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի շրջանակներում ընթացքում ձեռք բերելու հարցում:

Դիմումին կցվում է Ակունք համայնքի «ՀԱԿԱԶԿ»-ի թիվ 5 նիստի արձանագրությունը:

Կանխավ շնորհակալություն:

Ակունք համայնքի «ՀԱԿԱԶԿ»-ի նախագահ՝ ______________ Հ.Ռուբենյան

«Ակունք համայնքի

արոտօգտագործողների միավորում» ՍԿ- ի նախագահ՝ ______________ Ա. Ավետիսյան

<< 05 >> հոկտեմբեր 2021թ.

Արձանագրություն N 5

Ակունք համայնքի ՀԱԿԱԶԿ-ի նիստի

Ակունք համայնք «05» հոկտեմբեր 2021թ.

Մասնակցեցին Ակունք համայնքի ՀԱԿԱԶԿ-ի 6 անդամներ:

ՀԱԿԱԶԿ-ի նիստի նախագահ ընտրվեց Հունան Ռուբենյանը

Քարտուղար՝ Աբրահամ Ավետիսյանը

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ» ծրագրի շրջանակներում «Ակունք համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման պլան»-ով նախատեսված «ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՏՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» սպառողական կոոպերատիվի համար ձեռք բերվող գյուղատնտեսական տեխնիկայի ցանկի փոփոխություն:

**Ակունք համայնքի ՀԱԿԱԶԿ-ի նիստը որոշում է.**

Հաշվի առնելով «ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՏՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» սպառողական կոոպերատիվի կողմից մշակվող, ինչպես նաև Ակունք խոշորացված համայնքի մշակովի հողատարածքների քարքարոտության աստիճանը, անհրաժեշտություն է առաջացել «Ակունք համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման պլան»-ում կատարել փոփոխություն՝ կառավարման պլանով նախատեսված գյուղտեխնիկաներից բացի ձեռք բերել նաև 1 հատ ՄՏԶ 150 կամ 180ձ.ուժ հզորությամբ անիվավոր տրակտոր և 1 հատ քարհավաք մեքենա:

**Որոշումը կայացվեց՝ 6 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով:**

1. Հունան Ռուբենյան ______________ կոմիտեի նախագահ
2. Գոռ Մկրտչյան ______________ ավագանու անդամ
3. Աղվան Հարությունյան ______________ ավագանու անդամ
4. Մարիետա Աբրահամյան ______________ ԱՄՍԿ վարչության անդամ
5. Նունե Սարգսյան ______________ ԱՄՍԿ վարչության անդամ
6. Աբրահամ Ավետիսյան ______________ ԱՄՍԿ նախագահ

ՀԱԿԱՁԿ-ի նախագահ՝ ____________ Հ.Ռուբենյան

<<ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՐՈՏՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ

ՄԻԱՎՈՐՈՒՄ>> ՍԿ նախագահ՝ ____________ Ա.Ավետիսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 73

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության2011թվականի դեկտեմբերի29-ի թիվ 1918-Ն,թիվ1920-Ն որոշումները,Հայաստանի Հանրապետության վարչապետի2001 թվականի օգոստոսի 03-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված«Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի»,2009թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմանբ ստեղծված «Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի» դրական եզրակացությունները, ներկայացված հայտերը և Արգիշտի Զաքարյանի դիմումը, համայնքի ավագանին որոշում է՝

1.Փոխել հողամասերի նպատակային նշանակությունը համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ Դեմ -0 Ձեռնպահ -0
Կողմ -6

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

Հավելված
Համայնքի ավագանու
16.12.2021թ. թիվ 73 որոշման

# ՑՈՒՑԱԿ
## Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու

| Հ/Հ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը / հա / | Հողամասի առկա Նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխվող հողամասի նախատեսվող նպատակային և Գործառնական նշանակությունը | Հասցե | Որ իրավական ակտի համաձայն է փոփոխվում հողի նպատակային նշանակությունը | Սեփականության ձևը | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հողամաս | Ակունք համայնք, գ.Ակունք | 07-009-0108-0042 | 0.05 | Գյուղատնտեսական. Վարելահող | Բնակավայրերի. Բնակելի կառուցապատման | Մարզ Կոտայք, համայնք Ակունք գ.Ակունք, 108 թաղամաս, 42 հողամաս | Միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացություն N 255 | Քաղաքացու | Չկան |
| 2 | Հողամաս | Ակունք համայնք, գ.Նոր գյուղ | 07-049-0224-0101 | 3.3 | Գյուղատնտեսական. Վարելահող, Այլ հողատեսք | Արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների Գյուղարտադրական | Մարզ Կոտայք, համայնք Ակունք գ.Նոր գյուղ, 224-րդ թաղամաս, 101 հողամաս | Հողային Օրենսգրքի 7-րդ հոդված 8-րդ մաս 3-րդ կետ | Քաղաքացու | Չկան |
| 3 | Հողամաս | Ակունք համայնք, գ.Կոտայք | 07-038-0131-0005 | 0.1742 | Գյուղատնտեսական. Վարելահող | Արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների Գյուղարտադրական | Մարզ Կոտայք, համայնք Ակունք գ.Կոտայք, 131-րդ թաղամաս, 5 հողամաս | Հողային Օրենսգրքի 7-րդ հոդված 8-րդ մաս 3-րդ կետ | Քաղաքացու | Չկան |
| 4 | Հողամաս | Ակունք համայնք, գ.Կոտայք | 07-038-0112-0032 | 1.9953-ից 0.32 | Գյուղատնտեսական. Արոտավայր, Այլ հողատեսք | Բնակավայրերի Հասարակական Կառուցապատման | Մարզ Կոտայք, համայնք Ակունք գ.Կոտայք, 113-րդ թաղամաս, 32 հողամաս | Միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացություն N 262 և քաղաքացու դիմումը | Քաղաքացու | Չկան |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# **Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 72

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ, 67-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, համայնքի հողերի օգտագործման սխեմային համապատասխան, համայնքի ավագանին որոշում է՝

1. Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը օտարել.
1)աճուրդ–վաճառքի միջոցով և հաստատել մեկնարկային գներ՝ համաձայն հավելված 1-ի,
2)ուղղակի վաճառքով,ընդլայնման նպատակով և հաստատել ուղղակի վաճառքի գին համաձայն հավելված 2-ի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

Հավելված 1
Համայնքի ավագանու
16.12.2021թ. թիվ 78 որոշման

# Ացուսակ

## Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը / հա / | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Կադաստրային արժեքը /դրամ/ | Գնահատման կարգ | Մեկնարկային գին /Դրամ / | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հողամաս | Ակունք համայնք | 07-049-0274-0042 | 0.53685<br>0.50194 | Գյուղատնտեսական | | Վարելահող<br>Արոտավայր | | | 1 700 000 | Չկան |

Հավելված 2
Համայնքի ավագանու
16.12.2021թ. թիվ որոշման

# Աղյուսակ

## Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղակի վաճառքով օտարելու

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը / հա / | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Կառուցապատված /մակերես/ | Գնահատման խումբ | Ուղղակի վաճառքի գին /դրամ/ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հողամաս, Շենք-շինություն | Ակունք համայնք | 07-049-0281-0023 | 0.03478 | Բնակավայրերի | | Բնակելի Կառուցապատման | | | 3 455 602 | Չկան |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 71-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի,«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի,համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2022 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:
2. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում գործառնական և տնտեսագիտական դասակարգմամբ կատարել վերաբաշխումներ, որոնց հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չպետք է գերազանցի տվյալ տարվա բյուջեի սույն որոշմամբ սահմանված գործառնական և տնտեսագիտական դասակարգմամբ չափաքանակների 20% -ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 70

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի4.1 կետի, 82.1-րդ հոդվածի,Ակունք համայնքի ավագանին որոշում է '

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 69

## ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, հինք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Ակունք համայնքի ավագանին որոշում է '

1. Հաստատել Ակունք համայնքում իրականացվող դրամաշնորհային ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

**Հավելված**
Ակունք համայնքի ավագանու
դեկտեմբերի 19-ի N69 որոշման

**Ակունք համայնքում իրականացվող դրամաշնորհային ծրագիր**

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | ՄԱԶԾ ««Կայուն համայնքներ»» |
| Նախագծի անվանումը | ««Solar 24»» |
| Ծրագրի նպատակը | Գյուղական բնակավայրերում փողոցային լուսավորության արդիականացումը |
| Ֆինանսավորումը | Ռուսաստանի Դաշնության կողմից և իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ: |
| Էներգախնայող մեկ լամպի արժեքը | 45 000 ՀՀ դրամ |
| Համայնքի կողմից համաֆինանսավորման չափը | 20 % |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 68-Ա

## «ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28 -րդ կետի,Ակունք համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել՝«Ակունք համայնքի մանկապարտեզ»համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2022թվականի աշխատողների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022թվականի հունվարի 1-ից :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

Հավելված
Համայնքի ավագանու 2021թվականի
դեկտեմբերի 16-ի թիվ 68 Ա որոշման

«ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| N | Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավորը | Աշխատակիցների քանակը | Պաշտոնային դրույքաչափը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 130000 | 130000 |
| 2 | Մեթոդիստ ուս.գծով , տնօրենի տեղակալ | 0.75 | 1 | 103 000 | 77 250 |
| 3 | Բուժքույր | 0.75 | 1 | 103 000 | 77 250 |
| 4 | Հաշվապահ | 0.75 | 1 | 103 000 | 77 250 |
| 5 | Տնտեսվար | 1 | 1 | 103 000 | 103 000 |
| 6 | Խոհարար | 1 | 1 | 103 000 | 103 000 |
| 7 | Խոհարարի օգնական | 0.75 | 1 | 103 000 | 77 250 |
| 8 | Հավաքարար,լվացարար | 1 | 1 | 103 000 | 103 000 |
| 9 | Հնոցապան,բանվոր | 0.5 | 1 | 103000 | 51 500 |
| 10 | Պահակ | 1 | 1 | 103 000 | 103 000 |
| 11 | Երաժշտության դաստիարակ | 0.75 | 1 | 103 000 | 77 250 |
| 12 | Դաստիարակ | 3.3 | 3 | 113 000 | 339 900 |
| 13 | Դաստիարակի օգնական | 3 | 3 | 103 000 | 309 000 |
| 14 | Այգեպան,դռնապան | 1 | 1 | 103 000 | 103 000 |
| | Ընդամենը | 16.76 | 18 | | 1 731 650 |

Հաստիքային միավորների թիվը 1 խմբի հաշվարկով

| N | Նախադպրոցական խմբեր<br>Պաշտոնի անվանումը | 5-օրյա աշխատանքային<br>շաբաթի դեպքում |
|---|---|---|
| | | 8 ժամ |
| 1 | Դաստիարակ | 1.1 |
| 2 | Դաստիարակի օգնական | 1 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 67-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ,ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի,համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի Մարզի Ակունքի համայնքապետարանի 2022թվականի աշխատակազմի կառուցվածքը,աշխատողների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 1-2-ի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

Հավելված1
ՀՀ Կոտայքի մարզի
Ակունք համայնքի ավագանու
2021_թ.դեկտեմբերի 16-ի N 67 -Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

## ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժին

Հավելված 2
Ակունքի համայնքի ավագանու
2021 թվականի դեկտեմբերի 16-ի
N 67 - Ա որոշման

ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատողների քանակը՝ 50
2. Աշխատակազմի հաստիքացուցակը
և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Պաշտոնի ծածկագիրը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **Քաղաքական պաշտոններ** | | | | | | |
| 1 | Համայնքի ղեկավար | | 1 | 438 000 | | | 438 000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | | 1 | 230 000 | | | 230 000 |
| 2.1 | Համայնքի ղեկավարի տեղակալ | | 1 | 230 000 | | | 230 000 |
| | **Հայեցողական պաշտոններ** | | | | | | |
| 3 | Համայնքի ղեկավարի օգնական | | 1 | 250 000 | | | 250 000 |
| 4 | Համայնքի ղեկավարի խորհրդական | | 1 | 250 000 | | | 250 000 |
| 5 | Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար | | 1 | 160 000 | | | 160 000 |
| | **Վարչական պաշտոններ** | | | | | | |
| 6 | Վարչական ղեկավար | | 4 | 250 000 | | | 1 000 000 |
| 7 | Վարչական ղեկավար | | 3 | 200 000 | | | 600 000 |
| | **Համայնքային ծառայության պաշտոններ** | | | | | | |
| 8 | Աշխատակազմի քարտուղար | 1.2-1 | 1 | 260 000 | | | 260 000 |
| 9 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 2.3-2 | 1 | 230 000 | | | 230 000 |
| 10 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 2.3-3 | 1 | 230 000 | | | 230 000 |
| 11 | Առաջատար մասնագետ | 3.1-2 | 1 | 200 000 | | | 200 000 |
| 12 | Առաջատար մասնագետ | 3.1-3 | 1 | 200 000 | | | 200 000 |
| 13 | Առաջատար մասնագետ | 3.1-4 | 1 | 200 000 | | | 200 000 |
| 14 | Առաջին կարգի մասնագետ | 3.2-5 | 1 | 170 000 | | | 170 000 |
| 15 | Առաջին կարգի մասնագետ | 3.2-6 | 1 | 170 000 | | | 170 000 |
| 16 | Առաջին կարգի մասնագետ | 3.2-7 | 1 | 170 000 | | | 170 000 |
| 16 | Առաջին կարգի մասնագետ | 3.2-8 | 1 | 170 000 | | | 170 000 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժին** | | | | | | |
| 17 | Բաժնի պետ | 2.1-1 | 1 | 240 000 | | | 240 000 |
| 18 | Գլխավոր մասնագետ | 2.3-1 | 1 | 230 000 | | | 230 000 |
| 19 | Առաջատար մասնագետ | 3.1-1 | 1 | 200 000 | | | 200 000 |
| 20 | Առաջին կարգի մասնագետ | 3.2-1 | 1 | 170 000 | | | 170 000 |
| 21 | Առաջին կարգի մասնագետ | 3.2-2 | 1 | 170 000 | | | 170 000 |
| 22 | Առաջին կարգի մասնագետ | 3.2-3 | 1 | 170 000 | | | 170 000 |
| 23 | Առաջին կարգի մասնագետ | 3.2-4 | 1 | 170 000 | | | 170 000 |
| 24 | Երկրորդ կարգի մասնագետ | 3.3-1 | 1 | 160 000 | | | 160 000 |
| 25 | Երկրորդ կարգի մասնագետ | 3.3-2 | 1 | 160 000 | | | 160 000 |
| 26 | Երկրորդ կարգի մասնագետ | 3.3-3 | 1 | 160 000 | | | 160 000 |
| | **Տեխնիկական սպասարկման անձնակազմ** | | | | | | |
| 27 | Մշակույթի աշխատող | | 3 | 130 000 | | | 390 000 |
| 28 | Հավաքարար | | 4.5 | 110 000 | | | 495 000 |
| 29 | Հավաքարար | | 1 | 130 000 | | | 130 000 |
| 30 | Վարորդ | | 1 | 140 000 | | | 140 000 |
| 31 | Տնտեսվար | | 1 | 170 000 | | | 170 000 |
| | Ջողաշեն բնակավայրի համայնքային կենտրոնի աշխատող | | 1 | 140 000 | | | 140 000 |
| | | | | | | | |
| 32 | **Քաղաքացիական աշխատանք** | | | | | | |
| 33 | Անասնաբույժ | | 5 | 110 000 | | | 550 000 |
| | | | | | | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 50 | | | | 9 003 000 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 66-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի,«Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի,համայնքի ավագանին որոշում է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի կողմից 2022թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների տեսակներն ու դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022թվականի հունվարի 1-ից :

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

Հավելված

Ակունք համայնքի ավագանու
2021 թվականի դեկտեմբերի 16 -ի
N 66 -Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հողամասերի, շինությունների, նպատակային, գործառնական նշանակության փոփոխության նպատակով փաստաթղթերի կազմման համար.
   1) ֆիզիկական անձանց համար 10 000 (տաս հազար) դրամ
   2) իրավաբանական անձանց համար 20000 (քսան հազար) դրամ
2. Հատակագծի հաստատման համար 3000 (երեք հազար) դրամ
3. Իրադրության հատակագծի տրամադրման համար 1000 ( հազար) դրամ
4. Ակունք համայնքի Ակունք և Կապուտան բնակավայրերի գյուղամերձ արոտներից օգտվելու համար.
   1) մեկ գլուխ խոշոր եղջերավոր անասունի համար տարեկան 500 ( հինգ հարյուր) դրամ
   2) մեկ գլուխ մանր եղջերավոր անասունի համար տարեկան 200 (երկու հարյուր) դրամ;

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 65-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին»օրենքի 8-րդ,9-րդ,10-րդ,11-րդ,12-րդ,13-րդ, 14-րդ հոդվածների,«Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի18-րդ հոդվածի1-ին մասի 18-րդ կետի,«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածի,համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել՝Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2022թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը համաձայն 1,2 հավելվածների:

2.Սույն որոշման հավելված 1-ի.

1)1-ին կետով սահմանված դրույքաչափերի նկատմամբ Ակունք համայնքի Կապուտան,Հատիս,Զովաշեն,Զառ և Սևաբերդ բնակավայրերի համար կիրառել 0.5 գործակից,

2) 4-րդ,4.1-4.5 կետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0.5 գործակից

3)5-րդ,7րդ կետերով,10-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափերի նկատմամբ նկատմամբ կիրառել 0.3 գործակից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022թվականի հունվարի 1-ից :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

Հավելված 1
Ակունք համայնքի ավագանու
2021 թվականի դեկտեմբերի 16 -ի N 65 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | Տեղական տուրքերի տեսակներն | Ավագանու կողմից սահմանված դրույքաչափը ( դրամ ) | կիրառված գործակիցը և դրույքաչափը |
|---|---|---|---|
| 1. | Օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ | | 0,5 գործակից կիրառել Կապուտան, Յատիս, Զովաշեն,Զառ և Սևաբերդ բնակավայրերի համար |
| | **1) հիմնական շենքերի և շինությունների համար՝** մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ | 15 000( տասնհինգ հազար ) | 7500( յոթ հազար հինգ հարյուր ) |
| | **2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝** ա. 200-ից մինչև 500 քառակուսի մետր | 30 000 ( երեսուն հազար ) | 15 000( տասնհինգ հազար ) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | | | |
| | բ. 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 50 000( հիսուն հազար ) | 25 000( քսան հինգ հազար ) | |
| | գ. 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 50 000( հիսուն հազար ) | 25 000( քսան հինգ հազար ) | |
| | դ. 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 100 000 ( հարյուր հազար ) | 50 000 ( հիսուն հազար ) | |
| | **3) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝** ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 3 000( երեք հազար) | 1500(հազար հինգ հարյուր) | |
| | բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 5 000( հինգ հազար ) | 2500( երկու հազար հինգ հարյուր ) | |
| 2. | Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | | | Գործակից կիրառված չէ |
| | 1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն | 3 000 ( երեք հազար ) | 3000( երեք հազար ) | |
| | 2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) | | | |

| | | | |
|---|---|---|---|
| | հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով, | | |
| | 3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը. | | |
| 3. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար | 5 000( հինգ հազար ) | 5 000( հինգ հազար ) |
| 4 | Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար | 200 000( երկու հարյուր հազար ) | 100 000(հարյուր հազար ) |
| 4.1 | Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար | 200 000 (երկու հարյուր հազար) դրամ. | 100 000(հարյուր հազար ) |

| | | | |
|---|---|---|---|
| 4.2 | Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ. | 200 000 (երկու հարյուր հազար) դրամ. | 100 000(հարյուր հազար ) |
| 4.3 | Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված Ակունք համայնքի բարձրլեռնային՝ Յատիս,Զովաշեն,Սևաբերդ բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 100 000(հարյուր հազար) | 50 000(հիսուն հազար ) |
| 4.4 | Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված բարձրլեռնային՝ Յատիս,Զովաշեն,Սևաբերդ բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 100 000(հարյուր հազար) | 50 000(հիսուն հազար) |
| 4.5 | Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված բարձրլեռնային Յատիս,Զովաշեն,Սևաբերդ բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝. | 100 000(հարյուր հազար) | 50 000(հիսուն հազար) |

| | | | |
|---|---|---|---|
| 5 | Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 60 000( վաթսուն հազար ) | 0,3գործակից<br>18 000( տասնութ հազար ) |
| 6. | Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար | 50 000( հիսուն հազար ) | 50 000( հիսուն հազար ) |
| 7. | Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ | | |
| | **1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար** | | 0,3 գործակից |
| | ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 8 500( ութ հազար հինգ հարյուր ) | 2 550(երկու հազար հինգ հարյուր հիսուն ) |
| | բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 10 500( տասը հազար հինգ հարյուր ) | 3 150( երեք հազար հարյուր հիսուն ) |
| | գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 13 500( տասներեք հազար հինգ հարյուր ) | 4 050(չորս հազար հիսուն ) |
| | դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ | 20 500( քսան հազար հինգ հարյուր ) | 6 150( վեց հազար հարյուր հիսուն ) |

| | | | |
|---|---|---|---|
| | հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | | |
| | ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 25 500( քսանհինգ հազար հինգ հարյուր ) | 7 650( յոթ հազար վեց հարյուր հիսուն ) |
| | զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 45500(քառասունհինգ հազար հինգ հարյուր ) | 13 650( տասներեք հազար վեց հարյուր հիսուն ) |
| | **2)** օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | | 0,3 գործակից |
| | ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 8 500( ութ հազար հինգ հարյուր ) | 2 550(երկու հազար հինգ հարյուր հիսուն ) |
| | բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 10 500( տասը հազար հինգ հարյուր ) | 3 150( երեք հազար հարյուր հիսուն ) |
| | գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 13 500( տասներեք հազար հինգ հարյուր ) | 4 050( չորս հազար հիսուն ) |
| | դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 20 500 ( քսան հազար հինգ հարյուր ) | 6 150( վեց հազար հարյուր հիսուն ) |
| | ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 25 500( քսանհինգ հազար հինգ հարյուր ) | 7 650 ( յոթ հազար վեց հարյուր հիսուն) |
| | զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական | 45 500 | 13 650 ( տասներեք հազար վեց հարյուր հիսուն ) |

| | | | |
|---|---|---|---|
| | շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | ( քառասունհինգ հազար հինգ հարյուր ) | |
| 8. | Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար | 350( երեք հարյուր հիսուն) | 350 ( երեք հարյուր հիսուն) |
| 9. | Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | | Գործակից կիրառված չէ |
| | 1) առևտրի օբյեկտների համար | 5 000( հինգ հազար ) | 5000( հինգ հազար ) |
| | 2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար | 25 000( քսանհինգ հազար ) | 25 000( քսանհինգ հազար ) |
| | 3) բաղնիքների (սաունաների) համար | 200 000( երկու հարյուր հազար ) | 200 000 երկու հարյուր հազար ) |
| | 4) խաղատների համար | 500 000( հինգ հարյուր հազար) | 500 000( հինգ հարյուր հազար) |
| | 5) շահումով խաղերի համար | 250 000 ( երկու հարյուր հիսուն հազար ) | 250 000 ( երկու հարյուր հիսուն հազար ) |
| | 6) վիճակախաղերի համար | 100 000( հարյուր հազար ) | 100 000 ( հարյուր հազար ) |
| 10. | Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝ | | 0,3 գործակից |
| | **1) հիմնական շինությունների ներսում՝** | | |

| | | | |
|---|---|---|---|
| | ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 5 000 ( հինգ հազար ) | 1 500 (հազար հինգ հարյուր ) |
| | բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 9 000 ( ինը հազար ) | 2 700 ( երկու հազար յոթ հարյուր ) |
| | գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 13 500 (տասներեք հազար հինգ հարյուր ) | 4 050 ( հինգ հազար հիսուն ) |
| | դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 17 000 ( տասնյոթ հազար ) | 5 100 ( հինգ հազար հարյուր) |
| | ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 22 000 ( քսաներկու հազար ) | 6 600 ( վեց հազար վեց հարյուր ) |
| | զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 33 500 երեսուներեք հազար հինգ հարյուր ) | 10 050( տաս հազար հիսուն ) |
| | **2) ոչ հիմնական շինությունների ներսում՝** | | Գործակից կիրառված չէ |
| | ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 1 000 ( մեկ հազար ) | 1 000 ( մեկ հազար ) |
| | բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 1 500 ( հազար հինգ հարյուր) | 1 500 ( հազար հինգ հարյուր) |
| | գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 2 500 ( երկու հազար հինգ հարյուր ) | 2 500 ( երկու հազար հինգ հարյուր ) |
| | դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 4 500 ( չորս հազար հինգ հարյուր ) | 4 500 ( չորս հազար հինգ հարյուր ) |
| | ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 8 500 ( ութ հազար հինգ հարյուր ) | 8 500 ( ութ հազար հինգ հարյուր ) |
| | զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 15 500 ( տասնհինգ հազար հինգ հարյուր ) | 15 500 ( տասնհինգ հազար հինգ հարյուր ) |

| | | | |
|---|---|---|---|
| 11. | Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ | | Գործակից կիրառված չէ |
| | 1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 2000 ( երկու հազար ) | 2 000 ( երկու հազար ) |
| | 2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 3 500( երեք հազար հինգ հարյուր ) | 3 500( երեք հազար հինգ հարյուր ) |
| | 3) սոցիալական գովազդի համար | 0 ( զրո ) | 0 ( զրո ) |
| | 4) այլ արտաքին գովազդի համար | 1 500( հազար հինգ հարյուր ) | 1 500( հազար հինգ հարյուր ) |
| | 5) դատարկ գովազդային վահանակների համար | 375 ( երեք հարյուր յոթանասունհինգ ) | 375( երեք հարյուր յոթանասունհինգ ) |
| | 6) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը | 150( հարյուր հիսուն ) | 150( հարյուր հիսուն ) |
| 12. | Հայաստանի Հանրապետության համայնքների կամ համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ. | 100 000 ( հարյուր հազար ) | 100 000 ( հարյուր հազար ) |
| 13. | Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար | 10 000( տաս հազար ) | 10 000 ( տաս հազար ) |
| 14. | Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման | 500 000 հինգ հարյուր հազար ) | 500 000( հինգ հարյուր հազար ) |

| | | | |
|---|---|---|---|
| | թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար | | |
| 15. | Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | | Գործակից կիրառված չէ |
| | 1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար | 2 500 000( երկու միլիոն հինգ հարյուր հազար ) | 2 500 000( երկու միլիոն հինգ հարյուր հազար ) |
| | 2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար | 5 000 000 ( հինգ միլիոն ) | 5 000 000( հինգ միլիոն ) |
| | 3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար | 7 000 000 ( յոթ միլիոն ) | 7 000 000( յոթ միլիոն ) |
| | 4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար | 10 000 (տասը միլիոն ) | 10 000 ( տասը միլիոն ) |

Հավելված 2
Ակունք համայնքի ավագանու
2021թվականի դեկտեմբեր 16 -ի թիվ 65-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝

1) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական **150/ հարյուր հիսուն** / Հայաստանի Հանրապետության դրամ, կամ

2) ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **5 /հինգ** / Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

1) առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար**՝ 50 / հիսուն** / Հայաստանի Հանրապետության դրամ.

2) հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝**20 / քսան** /Հայաստանի Հանրապետության դրամ.

3) վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 /**տասնհինգ**/ Հայաստանի Հանրապետության դրամ.

4) գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար**՝3 /երեք** /Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **8 /ութ/** Հայաստանի Հանրապետության դրամ.

5) արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **5 /հինգ/** Հայաստանի Հանրապետության դրամ.

2.1. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **50 /հիսուն** /Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հավելվածի 2-րդ կետի 1-5-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

1) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ **3 000 /երեք հազար/** Հայաստանի Հանրապետության դրամ, կամ

2) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ **10 000 /տասը հազար/** Հայաստանի Հանրապետության դրամ.

4. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար**5 000/հինգ հազար/դրամ:**

**5.** ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտովփաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար**5 000( հինգ հազար )դրամ:**

**6.** ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար**5 000( հինգ հազար )դրամ:**

**7.**Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար**5 000( հինգ հազար ) դրամ**

**8.**Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար**5 000( հինգ հազար ) դրամ**

**9.**Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝**5 000( հինգ հազար ) դրամ**

**10.**Համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար փոխհատուցման վճար **1000 /մեկ հազար/ դրամ**

**11.** Համայնքի Զառ բնակավայրի փաստացի բնակվող ընտանիքի համար, համայնքի կողմից մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց ամսական փոխհատուցման վճար սահմանել՝ամսական**1000(մեկ հազար) դրամ**

**12.**Համայնքի Զառ բնակավայրում փաստացի գործունեություն իրականացնող խոշոր գյուղացիական տնտեսությունների (անասնապահական ֆերմաների) համար համայնքի կողմից մատուցված խմելու ջրամատակարարման ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ ամսական**2000 (երկու հազար)դրամ**

**13.** Համայնքի Նոր գյուղ,Կոտայք,Կապուտան,Հատիս,Զովաշեն,Սաբերդ բնակավայրում համայնքի կողմից մատուցված խմելու ջրամատակարարման ծառայությունների**1/մեկ /մետր խորանարդի** դիմաց փոխհատուցման վճար սահմանել **50 (հիսուն)դրամ**

**15.**Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով՝1 երեխայի համար ամսական**7 000( յոթ հազար )դրամ**

**16.** Համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար**3000 (երեք հազար)դրամ:**

17.Կենդնիների հիվանդությունների բուժման,կանխարգելման հարցերով խարհրդատվություն՝1000/հազար/դրամ

18. Ծննդօգնություն՝

1) թեթև միջամտություն՝**1000**/հազար/դրամ

2) ծանր միջամտություն՝**5000**/հինգ հազար/դրամ

19.Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում կախված կենդանու տեսակից՝ (բացառությամբ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում » պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային և ներքին մակաբույծների դեմ պայքարի.

1) մանրակենդան **200**/երկու հարյուր/դրամ

2) խոշորկենդան **500**/հինգ հարյուր/ դրամ

20. Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝1000/հազար/ դրամ

21.Ախտահանություն 1 քառ /մ/ 2**00**/երկու հարյուր/ դրամ

22.Միջատազերծում՝1 քառ /մ/ **100**/ հարյուր/ դրամ

23.Կրծողների ոչնչացում /դեռատիզացիա/՝1 քառ /մ/ **200**/երկու հարյուր/ դրամ

24. Արհեստական սերմնավորում՝**5000**/հինգ հազար/ դրամ

25. Կենդանու հերձում.

1) մանրակենդան **1000**/հազար/դրամ

2) խոշորկենդան **3000**/երեք հազար/ դրամ

26.Կենդանաբուժում ՝կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից՝ յուրաքանչյուր այցելությունը**1000**/հազար/դրամ

27. Կենդանիների նախասպանդային զննում ՝կախված կեդանու տեսակից.

1) մանրակենդան **1000**/հազար/դրամ

2) խոշորկենդան **2000**/երկու հազար/ դրամ

28. Կենդանիների հետսպանդային զննում .

1) մանրակենդան **1000**/հազար/դրամ

2) խոշորկենդան **2000**/երկու հազար/ դրամ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 64

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 12 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 16 -ի թիվ 12 հերթական նիստի օրակարգը

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2022թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը սահմանելու մասին
2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի կողմից 2022 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների տեսակները ու դրույքաչափերը սահմանելու մասին
3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի 2022 թվականի կառուցվածքը,աշխատողների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
4.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի «Ակունք համայնքի մանկապարտեզ»համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2022թվականի աշխատողների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
5.Դրամաշնորհային ծրագրերի մասին
6.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին
7.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2022թվականի բյուջեն հաստատելու մասին
8. Հողամասերի օտարման մասին
9.Հողամասերի նպատակային նշանակության փոփոխման մասին
10.«Ակունք համայնքի արտադրատագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին

11. Ներքնակավյրային աշխարհագրական օբյեկտների անվանման եվ վերանվանման մասին

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**